ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Հարգել՛ի պարոն Շահգալդյան,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնքի <<Արա Մանուկյանի անվան ՄՊՄԴ>> ՀՈԱԿ-ի տարածքում կառուցվում է նոր բացօդյա խաղադաշտ: Առաջարկվում է համայնքի բյուջեից տրամադրել 950000 /ինը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումար՝ խաղադաշտը ցանկապատելու համար:

Կցվում է Չարենցավան համայնքի <<Արա Մանուկյանի անվան ՄՊՄԴ>> ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից ներկայացված գրությունը:

ԶԵԿՈՒՑՈՂ՝ ***Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ***

22.05.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԱՑՎԱԾ է «22» 05 2023թ.
Մտից N 1209 Թերթ N 21.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

Հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի N 01/06.2/02359 2023 թվականի մարտի 17-ի գրությունը ,առ այն որ 2023 թվականի օգոստոսի 15-19-ը անցկացվելու են Համահայկական ամառային 8-րդ խաղերը,Չարենցավան համայնքը պատրաստակամություն է հայտնել ընդունելու հրավերը և մասնակցելու համահայկական ամառային 8-րդ խաղերին:
Խնդրում եմ Ձեզ բյուջեից Չարենցավան համայնքի «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերին ավելացնել 2200,0 հազ. ՀՀ դրամ՝ Համահայկական ամառային 8-րդ խաղերին պատշաճ մասնակցություն ցուցաբերելու համար:

Զեկուցող՝ ***Գ. Գրիգորյան***

22.05.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ «22» 05 2023թ.
Մուտք N 2211 Թերթ N 21

REPUBLIC OF ARMENIA
CHILDREN ASSISTANCE
FUND

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ФОНД ПОДДЕРЖКИ
ДЕТЕЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն 73
093-89-42-76, 077-66-30-85
E-mail:childfund@mail.ru
www.childfundam.weebly.com
Facebook: ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

10.03.2023
N 03

Չարենցավան համայնքի ղեկավար
Պարոն Հակոբ Շահգալդյանին

Մեծարգո պարոն Շահգալդյան

Դուք քաջատեղյակ եք կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերին և բազմիցս ցուցաբերել եք աջակցություն:

Կազմակերպությունն իր ստեղծած «Հատուկ կարիքներ ունեցող երեխաների ցերեկային խնամքի և զարգացման կենտրոնում» 145 շահառու երեխաների մատուցում է լոգոպեդի, հատուկ մանկավարժի, հատուկ հոգեբանի, սոցիալական աշխատողի, ֆիզոթերապիստի, կավաթերապիստի, արտթերապիաների ծառայություններ և տարբեր խմբակներում երեխաները մասնակցում են զարգացման պարապմունքներին:
Այս պահին կենտրոնի ծառայություններից օգտվում են Չարենցավան խոշորացված համայնքի հաշմանդամություն ունեցող 5 երեխաներ: Մեկ անգամ Դուք աջակցել եք այս նախագծին: Սակայն ծրագիրը շարունական բնույթ է կրում և ամեն տարի աջակցության կարիք ունենք:

Դիմելով Ձեզ

խնդրում ենք աջակցել մեզ վերոնշյալ շահառուների ճանապարհածախսի և սննդի խնդիրը լուծելու համար: Ընդհանուր արժեքը մարտ – դեկտեմբեր ամիսների համար կազմում է 360.000 դրամ:

Խնդրում և ակնկալում ենք Ձեր աջակցությունը

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «28» 03 2023
Մուտք N 1388 Ելք N 04

«Ամերիաբանկ» ՓԲԸ «Հրազդան» մ/ճ
1570089924530100

Հարգանքներով
Հիմնադրամի գործադիր տնօրեն Կամո Առաքելյան